ՈՐՈՇՈՒՄ

9 դեկտեմբերի 2011 թվականի **թիվ 881** քաղ. Մոսկվա

«ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱԿՆՇՄԱՆ ՄԱՍԻՆ» ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի Համաձայնագրի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Մաքսային միության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **որոշեց**.

1. Ընդունել «Սննդամթերքի մակնշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (ՄՄ ՏԿ 022/2011) (կցվում է):

2. Հաստատել, որ՝

2.1. «Սննդամթերքի մակնշման մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգը (այսուհետ՝ Տեխնիկական կանոնակարգ) ուժի մեջ է մտնում 2013 թվականի հուլիսի 1-ից.

2.2. մինչեւ 2015 թվականի փետրվարի 15-ը թույլատրվում է սննդամթերքի արտադրությունը եւ շրջանառության մեջ դնելը՝ Մաքսային միության նորմատիվ իրավական ակտերով կամ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությամբ՝ սննդամթերքի մակնշմանը ներկայացվող պարտադիր պահանջներին համապատասխան՝ մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը:

2.3. սույն Որոշման 2.2 ենթակետին համապատասխան շրջանառության մեջ դրված արտադրանքի շրջանառությունը թույլատրվում է արտադրանքի՝ Մաքսային միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան

սահմանված պիտանիության ժամկետի ընթացքում:

3. Հանձնաժողովի քարտուղարությանը՝ Կողմերի հետ համատեղ, նախապատրաստել Տեխնիկական կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների ծրագրի նախագիծը եւ, սույն Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ,եռամսյա ժամկետում ապահովել դրա՝ սահմանված կարգով Հանձնաժողովի հաստատմանը ներկայացնելը:

4. Կողմերին՝

4.1. մինչեւ Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրը՝ սահմանել Տեխնիկական կանոնակարգի պահանջները պահպանելու նկատմամբ պետական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու համար պատասխանատու մարմիններին, եւ դրա մասին տեղեկացնել Հանձնաժողովին.

4.2. Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից ապահովել Տեխնիկական կանոնակարգի պահանջները պահպանելու նկատմամբ պետական հսկողության (վերահսկողության) իրականացումը՝ հաշվի առնելով սույն Որոշման 2.2-2.3 ենթակետերը:

5. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

Մաքսային միության հանձնաժողովի անդամներ՝

Բելառուսի Հանրապետությունից	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**
Ս. Ռումաս	**Ու. Շուկեեւ**	**Ի. Շուվալով**